'ի Սուրխաթ[1] և 'ի կողմանս սոցա ... յայնժամ զօրացաք մեք և բազմացաք և չինեցաք զգիւղս և զգաւառս իշխանք և ազնուականք. 'ի Ղարապա-զարէն սկսեալ մինչև 'ի Սուրխաթ և 'ի Ֆէօդոսիա, 'ի լերինս և 'ի դաշտս լի արարին վանօրէիւք և եկեղեցեօք, չինեցաք տունք 100,000 և զեկեղեցիս 1000, և 'ի ահէ Հոնականաց պարսպեցին 'ի քաղաքին Ֆէօդոսիա »: Մեզ այնպէս կ'երևի որ այս 'ի Ղրիմ գաղթող բիւրաւոր հայկազանց մի մասն, այսինքն 40,000 հոգի, գործածելու յարմար անձինք, կամ պարզ զրուցելով՝ զօրականք, Ղրիմէ դէպ 'ի հիւսիս դիմած են, ինչպէս յԱխսարայէ մինչև 'ի Ղրիմ պատերազմելով և ճեղքելով Թաթարաց խումբերը՝ կու գան, նոյնպէս աստի այսինքն 'ի Ղրիմէ մինչև ցԿամենից՝ նոյն թշնամեաց դէմ սուր գործածելով կը հասնին: 1331 ին կը դնէ Անտոնի Հայոց մեծ գաղթականութիւնը 'ի Կամենից: Յարմար միջոց կը գտնան Հայք՝ հայրենեաց (կործանեալ Անւոյ) քանդեալ և կործանեալ եկեղեցեաց և պալատից վրէժը հանելու 'ի տնաւեր Թաթարաց. կը խառնուին Կորիաթովիչ իշխանաց զօրախմբին մէջ և հալածելով զԹաթարս՝ բնակութիւն կը հաստատեն Կամենիցի մէջ. և տակաւ պատերազմական սուրերն վաճառականութեան տումարներու փոխելով՝ ձեռք կը զարնեն փոխանակ Անւոյ զԿամենից չէնցընել: Կորիաթովիչ իշ-

1. Սուրխաթ՝ այժմեան Հին-Ղրիմն է. ոմանք նմանաձայնութենէ շփոթելով զՍուտաղ կը կարծեն, որ սխալ է. Սուտաղի հին անունը՝ 'ի Յունաց է Սոլտէա, 'ի Ճենովացւոց՝ Սոլտայա (Soldaja), մեր ձեռագրաց մէջ կայ Սուդդա գրուած: